Արտահայտություն

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Տրված է մեկ տող, որը պարունակում է թվաբանական արտահայտություն, որտեղ կան միայն գումարի (+) և բազմապատկման (*) գործողություններ և ոչ բացասական ամբողջ թվեր: Ընդ որում + և * գործողությունները մեջընդմեջ հաջորդում են իրար, այսինքն կազմում են կամ +*+*… տեսքի հաջորդականություն:

Գրեք ծրագիր, որը հաշվում է արտահայտության արժեքը:

Մուտքային տվյալներ

Տրված է նկարագրված թվաբանական արտահայտություն պարունակող մեկ տող: Այն բացատանիշեր չի պարունակում: Գործողությունների քանակն առավելագույնը 10 է: Թվերը փոքր են 100-ից: Թեստերի 50%-ում բոլոր թվերը միանիշ են:

Ելքային տվյալներ

Պահանջվում է արտածել մեկ թիվ՝ արտահայտության արժեքը:

Օրինակ

Մուտք	Ելք
1+2*3+4	11